ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔ ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ (ՊՈԱԿ)

<<ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ>> ԽՄԲԱԿԻ

ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուսումնական տարի

Տնօրեն՝ Արևհատ Նազարյան

Տեխնոլոգիայի ուսուցիչ՝ Լիլիթ Մարտիրյան

2023թ.

<<ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ>> ԽՄԲԱԿԻ

ԾՐԱԳԻՐ

Շաբաթական 2 ժամ

Տարեկան 60 ժամ

Բացատրագիր

Հելունագործության խմբակի գործունեությունը ուղղված է սովորողների մոտ մշակութային արժեքների, աշխատանքային հմտությունների և գեղագիտական դաստիարակության ձևավորմանը:

Ծրագիրը նախատեսված է մեկ տարվա համար, շաբաթական 2 դասաժամով: Խմբակում նախատեսվում է ընդգրկել հիմնական դպրոցի սովորողներին:

Ծրագրի արդիականությունը՝

Ցանկացած ձեռագործություն դրական է ազդեցություն է թողնում երեխայի զարգացման վրա, նպաստում է ձեռքի մանր մոտորիկայի զարգացմանը, կոորդինացնում է ձեռքերի և աչքերի շարժումները, օգնում է ինքնադրսևորվել, միաժամանակ հնարավորություն է տալիս գնահատել սեփական աշխատանքը :

Ծրագիրը նաև հնարավորություն է ընձեռում սովորողներին ծանոթանալու հայկական և միջազգային մշակույթի հետ, ունենալու տարրական գիտելիքներ և հմտություններ հելունագործության ոլորտում:

Ծրագիրը ներառում է նաև օգտվել առցանց գրականությունից, որը կնպաստի մեդիագրագիտության զարգացմանը, առանձնացված են այն թեմաները, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը, ինչն էլ կնպաստի սովորողի գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների զարգացմանը:

Ծրագիրը ներառում է այցելություններ թանգարաններ և միժամանակ հետաքրքիր հանդիպումների կազմակերպում մշակութաբանների և ազգագրագետների հետ:

Ծրագիրը հնարավորություն է ընձեռում ԿԱՊԿՈՒ սովորողին ինքնուրույն ստեղծագործելու:

Խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Յուրաքանչյուր բաժնի համար ներկայացված են՝

թեմայի անվանումը, , խնդիրները, նպատակը, վերջնարդյունքը ժամաքանակը:

Բովանդակություն

Շաբաթական 2 ժամ

Տարեկան 60 ժամ

Թեմա 1 (2 դասաժամ)				
Թեմայի անվանումը	**Նպատակ**	**Խնդիր**	**Վերջնարդյունք**	**Ժամաքանակ**
1. Ձեռագործության առաջացման պատմությունը	**Զարգացնել** սովորողի հետաքրքրասիրությունը ձեռագործության նկատմամբ:	**Նկարագրել** ձեռագործության առաջացման պատմությունը:	**Կկարողանա նշել** փաստեր ձեռագործության (հելունագործություն) առաջացման պատմությունից:	1 դասաժամ
2.Ընդահնուր տեղեկություն հելունագործության մասին	**Խորացնել** սովորողի հետաքրքրասիրությունը հելունագործության նկատմամբ նկատմամբ	**Ներկայացնել** հետաքրքիր փաստեր հելունագործության մասին:	**Կկարողանա համադրել** ձեռագործության տեսակները (ասեղնագործություն, հելունագործություն, գոբելենագործություն, շյուղագործություն)	1 դասաժամ
Թեմա 2 (2դասաժամ)				
1.Հելունագործության համար անհրաժեշտ նյութեր և գործիքներ	**Ուսուցանել և ամրապնդել** հելունագործության համար ինչպիսի հելուններ և թելեր են օգտագործում	**Ներկայացնել և ցուցադրել** հելուններ ըստ չափսերի և կառուցված նյութի՝ մետաղե, պլաստմասե, փայտե:	**Կկարողանան ներկայացնել** ինչ է ընդգրկված հելունների հավաքածուի մեջ և **կնշեն** դրանց առավելություններն ու թերությունները:	2 դասաժամ
Թեմա 3 (3դասաժամ)				
1.Հելունագործության անվտանգության կանոններ	**Ուսուցանել և ամրապնդել** ինչպիսի անվտանգության կանոններ պետք է պահպանել հելունագործության ժամանակ	**Բացատրել և նկարագրել** որոնք են անվտանգության կանոնները, և ինչու պահպանել դրանք	**Կկարողանա** հիմնավորել ինչպես պետք է պահպանել անվտանգության կանոնները հելունագործության ժամանակ և **կկիրառի** հելունագործության ժամանակ	2 դասաժամ
2.Աշխատանքային հիգիենա	**Ուսուցանել և ամրապնդել** աշխատանքային հիգիենայի պահանջները և դրա կարևորությունը	**Բացատրել և ներկայացնել** աշխատանքային հիգիենայի կարևորությունը:	**Կկարողանա ներկայացնել** աշխատանքային հիգիենայի պահանջները և դրա կարևորությունը **կկիրառի** հելունագործության ժամանակ	1 դասաժամ

Թեմա 4 (5 դասաժամ)				
Հելունագործության տեխնիկան և եղանակները	**Ուսուցանել** հելունը պահելու ձևը, **զարգացնել** հելունագործության տեխնիկան, **նպաստել** հելունագործության տեխնիկայի և եղանակների մասին գիտելիքների **ամրապնդմանը**	**Բացատրել և ցուցադրել,** որ հելունը ձեռքում պահում են մատիտի նման: **Ներկայացնել,** որ գործելու ժամանակ ձեռքերը գտնվում են շարժման մեջ: **Նկարագրել** ՝որ հատվածներն են հելունագործության ժամանակ կարևոր	**Կկարողանա** ձեռքում հելունը ճիշտ պահել,գործել կարևոր հատվածները՝ շղթա, կիսասյուն, սյուն առանց թել վերցնելու, սյուն թել վերցնելով, սյուն երկու թել վերցնելով, սյան կրճատում, «թմբիկներ»:	5 դասաժամ
Թեմա 5 (5 դասաժամ)				
Հայկական զարդանախշեր	**Զարգացնել** հայկական զարդանախշերի մասին պատկերացումները: **Ձևավորել** պատկերացումներ զարդանախշերի տեսակների մասին:	**Բացատրել և ներկայացնել** հայկական զարդանախշերը ավեստում, դրանց տեսակները, նկարագրությունը:	**Կկարողանա** առանձնացնել և **նշել** զարդանախշերը ըստ տեսակների,	2 դասաժամ
Զարդանախշի ընտրություն	**Նպաստել և զարգացնել** գեղագիտական ճաշակ	**Բացատրել** զարդանախշի ընտրության սկզբունքը և անհրաժեշտությունը	**Կկարողանա** ինքնուրույն ընտրել զարդանախշ և հիմնարվորել ընտրությունը:	1 դասաժամ
Զարդանախշի էսքիզ	**Ուսուցանել և ամրապնդել** տեխնիկական նկարի՝ էսքիզի կատարման տեխնիկան	**Ներկայացնել** էսքիզի կատարման տեխնիկան տեխնոլոգիան	**Կկարողանա** կատարել էսքիզ	2 դասաժամ
Թեմա 6 (41 դասաժամ) Գործնական աշխատանքներ՝				
1. Գործել բոնիչներ	**Ամապնդել** տեսական գիտելիքները	**Բացատրել** աշխատանքների կատարման հերթականությունը, **ներկայացնել** կատարման տեխնիկան	**Կկարողանան** գործել հելունով, պահպանել անվտանգության և աշխատանքային հիգիենայի կանոնները	2 դասաժամ
2. Գլխարկ				6 դասաժամ
3. Տիկնիկներ				8 դասաժամ
4. Տակդիր				10 դասաժամ
5. Պայուսակ				15 դասաժամ

Խմբակի ժամանակ տրամդրվող գրականություն

1- https://www.youtube.com/watch?v=zaVgn6BcZIY
2- https://www.youtube.com/watch?v=gVKZb1PgWNU
3- https://www.youtube.com/watch?v=GEQiKCnyChA
4- https://www.youtube.com/watch?v=GgEkewOju7I
5- https://www.pinterest.ca/armenmatosyan/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B7%D5%A5%D6%80/
6- https://monster-book.com/vyazanie

Օգտագործված գրականություն

1. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՉՈՇԻՉ

2. <<Հայկական ասեղնագործ ժանյակ>> վարպետության դասեր հեղինակ՝ Լուսինե Մխիթարյան հրատարակչություն «Զանգակ»2016թ.

3. https://mybook.ru/author/neustanovlennyj-avtor-2/tehnika-vyazaniya-kryuchkom/read/

Տարեվերջին կազմակերպել ցուցահանդես և ներկայացնել կատարված աշխատանքները։